



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ԵՎՍԵՖԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ՝ ԱԿԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՊԱՏՄԻՉ*
(263—340)

ԵՎՍԵՖԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվսեփիոս Կեսարացին թողել է հարուստ և բազմաթիվ մատենագրական վաստակ, որի ընտրեղագույն մասը մեզ հասել է Ե դարի Ս. Սահակ-Մեսրոպյան աշակերտների ընտիր թարգմանությամբ:

«Եվսեփիոս արդեն աշխարհահռչակ պարծանք մըն է հայ մատենագրության»²¹:

Ա. Բրոնիկոն կանոնք կամ «Ժամանակականք»:

Կեսարացու սույն պատմական ու արժեքավոր երկասիրությունը բաղկանում է երկու մասերից: Առաջինն ըստ գրչագրերի ունի հետևյալ խորագիրը. «Եսեփի Պամփիլեայ Կեսարացույ Ժամանակականք», իսկ երկրորդը՝ «Բրոնիկոն կանոնք» ըստ հետևյալի.

1. Եսեփի Պամփիլեայ Կեսարացույ Ժամանակականք երկմասնեայ: Ի Հայերէն թարգմանութենէ եղելոյ ի Յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց: Թարգմանեալ ի Լատին բարբառ, աշխատասիրութեամբ

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1981 թվականի № 9-ից:

²¹ Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 54:

Հ. Մկրտիչ վ. Մխիթարեան Ազերեանց: Հաւաքմամբ հանդերձ յունական հատուածոց գտելոց առ մատենագիրս և լատելուածով կարևոր ծանօթութեանց... Մասն Ա. Ժամանակագրութիւն պատմական²²:

Այնուհետև նույնի Ա. մասը, Ժամանակագրութիւն պատմական, 408 էջ: Այս գիրքը մինչև նույն տարում հրատարակվել է երկու անգամ: Մատենագիրները նկարագրել են միայն մեկ հրատարակություն (Ա և Բ մասերը մեկ կազմում):

Նույնի Բ մասը՝ Բրոնիկոն կանոն. 207 էջ (Ա և Բ մասերը մեկ կազմում):

Նույնի Մասն Բ. Բրոնիկոն կանոն. 380 էջ²³:

Եվսեփիոս Կեսարացու Ե դարում հայերենի թարգմանված առաջին «նշանավոր և պատմական տեսակետով մեծապես հետաքրքրական երկասիրությունը... հասած է առ մեզ ի նախնյաց», ընտիր թարգմանությամբ: Ծառ կարևոր է նաև այն հանգամանքը, որ «անոր հույն սկզբնագիրն կորսված է և կամ անհարազատ քաղված մի միայն մնա-

²² Եսեփի Պամփիլեայ Կեսարացույ, Ժամանակականք երկմասնեայ. հայերեն, յունարեն, լատիներեն լեզուներով, Վենետիկ, Ս. Ղազար, 1818, էջ 196 (Ա և Բ մասերը մեկ կազմում):

²³ Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Հայկ Դավթյան, Մատենագիտություն, Երևան, 1967, համար 306, 307, 308, 309, էջ 80—81:

ցած, և եկամուտ հավելվածովք կամ գեղջմամբ բոլորովին կերպարանափոխ եղած է, որ ի հարկէ չէր կրնար ունենալ սկզբնագրին հարգն ու կարևորությունը»²⁴:

Եվսեփիոս Կեսարացու սույն աշխատության հայերեն թարգմանությունը անձանոթ էր մնացած մինչև 1818 թվականը, երբ Հ. Մկրտիչ Ավգերյանը այն հրատարակում է Ս. Ղազարով:

Կեսարացու սույն երկի հայերեն թարգմանությունը գտնում է 1786 թվականին Կ. Պոլսեցի—Պալատեցի—«ուսումնասեր» և հետաքննին Հովհաննիսյան Գևորգ» դպիրը «ի Փոքր Ասիա և ի Հայաստան» կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում, «ի խնդիր և ի գլուս նորանոր հին գրչագիր մատենից»:

Գևորգ դպիր Պալատեցին 1787 թ. իր կատարած գլուսի մասին «ավետում է» Վեներելի, Հ. Ղուկաս Ինճիճյանին, թե «Եվսեփիոս Բրոնիկոնին թարգմանությունն ալ գտնված էր և հարևելից արդեն ի Պոլիս հասած, զոր ստանալն անկարելի է՝ բայց անոր մեկ զաղափարն ունենալ մարթ էր»²⁵: Այս Հ. Ղուկաս Ինճիճյանն անձամբ Կ. Պոլսից Ս. Ղազար է քերում ձեռագիրը, «զոր փութաց թարգմանել ի լատին Ավգերյան Հ. Մկրտիչ վարդապետ»²⁶:

Կեսարացու սույն երկասիրությունը «անվամբ» միայն հայտնի էր մինչև «անցյալ դարուն վերջերը նաև մեր մատենագրության մեջ»:

Ավգերյանի հրատարակության հետ, նույն տարում լույս է տեսնում Իտալիայում լատիներեն թարգմանությամբ Եվսեփիոսի նույն Բրոնիկը, սակայն, «Ավգերյանը կգերազանցե իր հավատարմությամբն, բազմամուտ ծանոթությանց ճոխությամբ» մյուս թարգմանությունը, «հայկականն ալ միացնելով ընդ լատին թարգմանությանն, ինչպես նաև անկորուստ մնացած հունական հատվածներն»²⁷:

Հ. Մկրտիչ Ավգերյանը Բրոնիկոնի իր հայերեն հրատարակությանը կցել է նաև «ընդարձակ և հմուտ հառաչարան», լատիներեն լեզվով, էջ I—XXXVIII—XXXIX, որի մեջ խոսվում է Եվսեփիոսի «Բրոնիկոն» կամ «Ժամանակական» կոչված «մեծանուն, պանծալի» մատյանի մեջ «համօրէն հնապատում տառից նախնեաց» հայերեն թարգմանության և հրատարակության մասին: Նշվում է միաժամանակ վերոհիշյալ մատ-

յանի թարգմանության և հրատարակության կարևորությունը. «քանզի ի դարուց հետեւ բազմաց կորուսեալ է առ յոյնս յունական սկզբնագիր գործոյս, որոյ հարազատ թարգմանութիւն անտխեղծ ի սրբոց անտի թարգմանչաց մերոց տառնեալ է ազգին՝ պատահեցաւ անկթար ի միջի մերում մինչև ցօրս ցայս... ունել ունեին զճշարս Բրոնիկոն մատենիս Եւսեփի և արևմտեայք ի լատին թարգմանութեամբ մեծին Յերոնիմոսի ժամանակցի մերոց թարգմանչաց, բայց ոչ էր այն բաւական ի յագորդ ընթերցասիրաց, այլ առաւել սովեցուցիչ բաղձանաց նոցին»²⁸, որովհետև «գլխաւոր և առաջին կարեւոր մասը» կամ չէր թարգմանվել և կամ թարգմանվել էր բայց՝ կորել, իսկ երկրորդ մասը չունէր Եվսեփիոսի «վավերականությունը»:

Եվսեփիոսի Բրոնիկոնը երկու մասից է բաղկանում. «առաջին մասն» պարունակում է «ամենայն ճաշակը հնութեան և հիմունք ժամանակագրութեան, կամ անթարգման էր թողեալ և կամ ի կորուստ անկեալ... և միւս եւս՝ զի և երկրորդ մասն, կանոն առձայնեալ, այն է աղիւսակ ժամանակագրական՝ իբրև համառօտեալ բովանդակութիւն մասին առաջնոյ, ոչ տալը գեւերեան վավերականութիւն խնդրելի... խոստովան լինի սուրբն Յերոնիմոս չիրումն յառաջարանի ինքն ոչ՝ լոկ թարգման եղել Եւսեփի, այլ յօրինիչ՝ յաւելումով ազգի պատմական աւանդից ի բանից այլոց արևմտեան հեղինակաց: Եւ ահա մերս օրինակ՝ անշեղի և իբր անթերի՝ ունի այժմ տալ և երոպացոց զլրումն փափաքանաց իրեանց, այս է տեսանել զԵւսեփիոս կատարեալ և Եւսեփիոս հարազատ»:

Եվսեփիոսի «Ժամանակականը երկմասնեալ» աշխատությունը հայերենից թարգմանվել է լատիներենի և ապա «հաւաքելով զճշարտալ մնացածս յունական սկզբնագրի» թարգմանվել է հունարենի «ի համեմատութիւն աներկրայելի յունական հատումոց»²⁹:

«Ժամանակականը երկմասնեալ»-ի երկրորդ հատորը կոչվում է «Բրոնիկոն կանոն», դարձյալ տպագրված Վենետիկում 1818 թվականին, 380 էջ³⁰: Այս մասին Հ. Մկրտիչ Ավգերյանը հաստատում է. «Էրումն պակասորդի տեղոյս՝ յառաջին մասնէ առեալ, համեմատութեամբ Սամուէլի երիցու

²⁴ Մատենադարան..., նույնը, էջ 434:

²⁵ Նույնը, էջ 435:

²⁶ Նույնը, էջ 435:

²⁷ Նույնը, էջ 437—438:

²⁸ Եւսեփի Կեսարացոց ժամանականք... նույնը: Բան առ մերազնեալ ընթերցողս..., էջ XXXVIII:

²⁹ Նույնը, էջ XXXIX:

³⁰ Հայ գիրքը 1801—1850 թվականներին, նույնը, էջ 81:

և աստանոր ընթերցումն Յերոնիմեայ: «Քրոնիկոն կանոն» մի ընդհանուր ցանկ է հայերեն և լատիներեն լեզուներով, Ասորեստանի, Իսրայելի, հույների և այլ ազգերի նահապետների և թագավորների, որոնց անունն ու գործունեությունը կապված է Հին Կտակարանի պատմության հետ: «Քրոնիկոն կանոն»-ը ըստ Եվսեբիոսի հանդիսանում է մի «սինեգրական պատմություն», որը «Ադամայ և լինելությունն աշխարհի նստէ»:

Հրատարակության 39—61 էջերում տպագրվել է «չառաջաբան Եսեբի ի կանոն» 62—305 էջերը «Քրոնիկոն կանոն, որ եւ ժամանակականք կանոնք», 307—363 էջերը՝ adnotationes in canonem Eusebii, 365—388 էջերը՝ հատուկ անունների ցանկ: «Քրոնիկոն կանոն»-ի հայերեն թարգմանությունը կատարվել է Ե դարում մեր թարգմանիչ վարդապետների կողմից, այնքան հմտությամբ և հարազատությամբ որ ըստ մասնագետների վկայության այն «կորուստ հույն սկզբնագրին տեղ ծառայել, որովհետև հինգերորդ դարում մեջ եղած է և այնպիսի ժամանակի մը մեջ՝ երբ սկզբնագիր օրինակք հեղինակի» չէին կրնար այլալություն կրել»³¹:

Արևմուտքը, նշում են մատենագիրները, «իրավամբ երախտապարտ շնորհակալությամբ կընդուներ ի Հայաստան մատենագրությունն» որ զգուշավոր և խնամուտ ավանդապահ եղած էր այս մեծագին և ուսումնական աշխարհի ամենակարևոր երկսիրության, հին հարազատ և ամբողջ թարգմանությանը համար», որովհետև «հին պատմությանը համար մեծապես կարևոր ի Եվսեբիոսի ժամանակագրական կանոնաց գլուխը, ստուգությամբ խելամուտ ըլլալու համար թե ինչ կերպով իրարու հետ կապակցություն ունեն այս հեղինակի գաղափարք, որ իրմե ետքը եկող ամեն մատենագրաց առաջնորդն եղած էր»³²:

ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ» ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Եվսեբիոս Կեսարացու մատենագրական վաստակի արժեքավոր և «հմտագոյն» երկը, նրա «Պատմություն Եկեղեցույ» կամ «Պատմություն եկեղեցական» աշխատությունն է:

Սույն գործը հայերենի է թարգմանվել ըստ Մովսես Խորենացու վկայության Ս. Մեսրոպ Մաշտոցի թելադրությամբ. «Վկայ

քեզ ի մօտոյ երաշխաւորեացէ եկլէսիաստէ գիրք Եսեբի Կեսարացոյ, զոր ետ թարգմանել երանելի Մաշտոց ի հայ լեզու»³³:

Կեսարացու «Պատմություն Եկեղեցույ» գործը, հավանաբար թարգմանվել է Եդեսիայում, ասորերենից Ս. Մեսրոպ Մաշտոցի ընկերակցող մեր թարգմանիչ վարդապետների կողմից:

«Եվսեբի եկեղեցական պատմության թարգմանությունը կարող էր տեղի ունենալ միմիայն 29 փետրվար 416—420 փրկչական թվականին... ուրեմն, մեր թարգմանական գործերից ամենահինից մեկն է և միակը, որի թվականը այսպիսով հաշողվում է հաստատ որոշել»³⁴:

Մինչև Ե դարի 30 թվականը, մեր «թարգմանական գործերը» հիմնականում կատարվել են ասորերենից: Խորենացին այս մասին վկայում է. «Գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապելալ յասորոյն՝ յոչ լինելոյ յունի», որովհետև «չտալին պարսիկ վերակացութն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիրեանց մասինն, այլ միայն ասորի»³⁵:

Ուրեմն, «ոսկեդարյան դպրոցի ամենաստրական գրվածքը» Եվսեբիոսի «Պատմություն Եկեղեցույ» աշխատությունը Եդեսիայում թարգմանվել է 416—420 թվականներին:

Աստվածաշունչի հայերեն առաջին թարգմանությունը որը կոչվում է «գլխառաջագոյն» «զփութանակի» և «յանկարծագիտ» թարգմանություն, կատարվել է նույնպես Պեշիտոտ ասորերեն թարգմանության վրայից, 406—420-ական թվականներին, «ըստ մեծի մասին յասորոյն, ի ձեռն Սուրբ Սահակայ»³⁶:

Աստվածաշունչի երկրորդ թարգմանու-

³³ Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ, Պատմութիւն Հայոց, գիրք երկրորդ, բուն միջակ պատմութիւն մերոցն նախնեաց, Ժ եթէ ուստի՝ եզիտ զպատմութիւնն զկնի մատենիցն Մար Աբաս Կաւինայ..., Թիֆլիս, 1913, էջ 113—114:

³⁴ Գալուստ Տեր-Մկրտչյան, Շողակաթ, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 154—163, «Հայ մատենագրության հնագույն թվականները»:

³⁵ Խորենացի, նույնը, հետաձգ երրորդ, «Աւարտաբանութիւն մերոյ հայրենեաց, ԾԴ, Յաղագս դպրութեան հայոց, վրաց և Աղուանից, էջ 387:

³⁶ Մատենադարան..., նույնը, «առաջին թարգմանութիւն Ս. Գրոց ի հայ լեզու յատրականէ», և կամ «ասորի հին թարգմանութիւնք», էջ 58, 69—78, 82—101: Տես նաև Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), Երևան, 1944, էջ 87—86:

³¹ Մատենադարան..., նույնը, էջ 440:

³² Նույնը, էջ 439—440:

թյունը կամ սրբագրությունը կատարվել է 432—440 թվականներին, մեր թարգմանիչ վարդապետների 432-ին Կ. Պոլսից բերած «ստոյգ» և «հաստատուն» «Եօթանասանից» կոչված հունարեն օրինակի վրայից, «գորտնեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն-փութանակի հանդերձ նոքօք վերըստին յօրինել նորոգմամբ»³⁷:

Եվսեբիոս Կեսարացու «Պատմութիւն Եկեղեցւոյ» աշխատությունը հրատարակվել է Վենետիկում, 1877 թվականին, հետևյալ վերնագրով.

Եւսեբիոս Կեսարացւոյ
Պատմութիւն Եկեղեցւոյ
Յեղեալ յատրոյն ի հայ
ի հինգերորդ դարու
Պարգաբանեալ նոր թարգմանութեամբ
ի յոյն բնագրէն
ի ձեռն
Լ. Աթրահամ վ. Շարեան
Մխիթարեանց
ի Վենետիկ, ի վաճառ Ս. Ղազարու
1877, 773 էջ:

Հրատարակությունը սկսվում է գիտական բնույթի մի հառաջաբանով (էջ Ա—Է), որի մեջ կենսագրական սեղմ տողերով ներկայացվում է Կեսարացու կենսագրությունն ու նրա մատենագրական վաստակը, մանավանդ նրա «Պատմութիւն Եկեղեցւոյ» աշխատության արժեքն ու կարևորությունը. «Բազում երկասիրութեամբք եկաց նա, այր ականատր, գործեաց բազում ինչ և գրեաց բազմազոյն՝ յօգուտ եւ ի փառս Եկեղեցւոյ, գորոյ հմտագոյնն յերկասիրութեանց ահաւասիկ տամբք ի յոյս՝ ի վաշելումն եկեղեցաւք հմտից և գիտնոց: Եւ սորա եւն բազում աղ մատենաք, քաց յեկեղեցական աստմութենէ աստի, որք յաւելուն փառս անուան իւրոյ»:

Եվսեբիոսի «Պատմութիւն Եկեղեցւոյ» աշխատությունը ներկայացնում է Եկեղեցու հիմնադրման և տարածման պատմությունը, Ա. դարից սկսած մինչև 324 թվականը: Սկսվում է Քրիստոսի ծննդից: Ապա խոսվում է «զկարգաց յաշորոյթենէ սրբոց առաքելոց և զանցից ժամանակաց՝ որ յատրց անտի որ Փրկչին մերոյ մինչև առ մեզ, եթէ ո՛րչափ և որպիսի՝ ինչ իրք աւանդին ի պատմութիւն Եկեղեցւոյ և մանաւանդ գորոց ի գլուխ կարգեալ և առաջնորդք կացին գովութեամբ Եկեղեցեաց ա-

կանաւորաց, և թէ՛ ոչք այնոքիկ իցեն՝ որ ի դարս դարս գրաւոր կամ անգիր քարոզեցին զքանն Աստուծոյ և թէ՛ ո՛վ որ իցեն և ո՛ր ժամանակս՝ որ օտարոտի կրօնիք ի չարաչար մոլորութիւն խարդաւանեալք և ստանուն գիտութեան վարդապետս ծանուցեալ յայտնապէս՝ որպէս զգայս դժնդակս յարձակեցան անխնայ ի վերայ հօտին Քրիստոսի»³⁸:

Եվսեբիոսի «Պատմութիւն Եկեղեցւոյ» երկը բաղկանում է տասը «Դպրութիւն»-ներից կամ գրքերից, «չորում ինն հատորն պատմէ զՔրիստոսի մարդեղութենէն և զառաքելոցն սրբոց, նաև զամենայն եկեղեցական պատմութիւնս», ըստ հետևյալի.

Դպրութիւն առաջին ԺԲ գլուխ, էջ 6—68
Դպրութիւն երկրորդ ԻԶ գլուխ, էջ 71—140

Դպրութիւն երրորդ ԼԹ գլուխ, էջ 145—232

Դպրութիւն չորրորդ ԻԴ գլուխ, էջ 237—315

Դպրութիւն հինգերորդ ԻԸ գլուխ, էջ 319—414

Դպրութիւն վեցերորդ ԽԶ գլուխ, էջ 419—520

Դպրութիւն եօթերորդ ԼԲ գլուխ, էջ 525—610

Դպրութիւն ութերորդ ԺԷ գլուխ, էջ 613—667

Դպրութիւն իններորդ ԺԱ գլուխ, էջ 667—714

Դպրութիւն տասներորդ Թ գլուխ, էջ 717—761

Աշխատության վեցերորդ «Դպրութիւն»-ը, նվիրվել է Ռիզենեսի կենսագրության և վարքին, իսկ վերջին «Դպրութիւն»-ը՝ «վասն յաղաղութեան որ տուա մեզ յԱստուծոյ, վասն նորոգ շինութեան եկեղեցեաց, վասն տօնից նառակատեաց եկեղեցեաց որ բնդ ամենայն տեղիս, վասն յաղթութեան Կոնստանդիանու և առ ի նմանէ եղելոցն բնդ ամենայն իշխանութիւն հռովմէական պետութեան»:

Աշխատության 763—773 էջերը ներկայացնում են «Յանկ անուանց և մատենիս»:

Վենետիկյան հրատարակության մեջ, Կեսարացու «Պատմութիւն Եկեղեցւոյ» աշխատության հունարենից կատարված թարգմանության հետ, տողատակին «մանրագիր» հրատարակվել է նաև «զհին թարգմանու-

³⁷ Խորենացի, նույնը, գիրք երրորդ, գլուխ ԿԱ, էջ 354:

³⁸ Եւսեբիոս Կեսարացի «Պատմութիւն Եկեղեցւոյ», դպրութիւն առաջին, «թէ զի՞նչ է առաջարկ գործոյս», էջ 3—6:

թիւն... յատուցում եղեալն և ոչ ի յոյն բնագրէն զի հետախոյզ հայասերք առցեն և զճաշակ այնը»:

Եվսեբիոս Կեսարացի համարվում է իր ժամանակի ամենատիպական ձերկայացուցիչն ու պատմիչը, իսկ նրա պատմությունը՝ «հրաշալի ու շահեկան»:

Եվսեբիոսից հետո ոչ ոք չի կարողացել որևէ նոր բան ավելացնել Ա.—Դ դարերի Եկեղեցու պատմության վրա:

Ունենք Դ դարում Սոկրատես պատմիչը, որը կոչվում է նաև Սկոլաստիկոս, որը գրել է 7 գրքերից բնականաբան եկեղեցական մի պատմություն, շարունակելով Եվսեբիոսի պատմությունը, 305—439 թվականներին, սակայն նրա գործը ընդհանրապես նվիրված է Կ. Պոլսի պատրիարքական Աթոռի և եկեղեցիների գործունեությանը:

Սոկրատեսի պատմությունը 7-րդ դարում թարգմանվել է հայերենի Փիլոն Տիրակացու կողմից, ըստ Ասողիկի վկայության. «Ի տուրա աուրս (Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի օրով 661—667), էր Փիլոն Տիրակացի (կա՛մ Օիրակացի, կա՛մ Թրակացի) որ զՍոկրատայ պատմութիւնն «Պատմութիւն Սոկրատայ՝ ըստ հոռվմայեցոց նահանգին եպիսկոպոսաց և թագաւորաց, թարգմանեաց ի հայ լեզու» Ներսէս Կամսարական իշխանի խնդրանքով³⁹:

Միջին դարերը ոչ մի ակնառու եկեղեցական պատմիչ չեն ունեցել: Եղածները ժամանակագիրներ են, որոնց գործերը միայն իրենց դարի համար կարևոր են համարվում: Այս իսկ պատճառով Եվսեբիոս Կեսարացու «Պատմութիւն Եկեղեցոյ» գործը մնում է բացառիկ աշխատություն քրիստոնեական Եկեղեցու հնագույն շրջանի պատմության համար, առաջին դարից մինչև Դ դարի առաջին քառորդը, մինչև 324 թվականը:

Եվսեբիոս Կեսարացու մատենագրական վաստակից հայերենի են թարգմանվել նաև այլ մանր գործեր:

«Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» առաջին և երկրորդ հատորում (Երևան, 1965, 1970) կան հետևյալ հայերեն թարգմանությունները Եվսեբիոս Կեսարացու գործերից, հիմնականում նրա «Պատմութիւն Եկեղեցոյ» երկից.

Ա. հատոր.

8771. 1357 թ. Մառնատիր, գրիչ՝ Անտոն, Սերովյե քահանա. «Յեկեղեցական պատմութեանց Եւսեբիոսի», էջ 1080:

³⁹ Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ.—ԺԳ դար), Վենետիկ, 1880, Բ տպագրություն, էջ 456—457, նաև՝ Մատենադարան..., նույնը, էջ 694:

3782. ԺԲ դար. Մառնատիր, գրիչ՝ Գրիգոր, «Յեկեղեցական պատմութեանց Եւսեբիոսի», էջ 1083:

3787. ԺԴ դար. Մառնատիր, գրիչ՝ Գրիգոր քահանա, Սոթենեն, Ավագ. «Յեկեղեցական պատմութեանց Եւսեբիոսի», էջ 1080:

3880. 1780 թ. Կ. Պոլիս. Ժողովածու, գրիչ՝ Գրիգոր, Գևորգ սարկավագ. «Քաղուածք յեկեղեցական պատմութեանց Եւսեբիոսի», էջ 1093:

4290. 1571 թ. Ժողովածու. գրիչ՝ Մկրտտոմ, «Եւսեբեայ մեկնութիւն Ժ խորանագրն», էջ 1187:

4881. ԺԹ դար, Ժողովածու, «Հատուածք յեկեղեցական պատմութեանց և ի Բրոնհիկոն», էջ 1202:

4584. 1668 թ. Տիգրանակերտ, Ժողովածու, գրիչ՝ Աբրահամ երեց, «Եւսեբիոսի պատմութիւն եկեղեցական», էջ 1240:

4670. 1401 թ. Ոստան. Մառնատիր, գրիչ՝ Ծերուն. «Յեկեղ. պատմութեանց Եւսեբիոսի», էջ 1758:

4776. 1589 թ. Մառնատիր, գրիչ՝ Մկրտիչ, «Յեկեղեցական պատմութեանց Եւսեբիոսի», էջ 1260:

4677. ԺԵ դար, Մառնատիր, գրիչ՝ Խաչատուր. Յեկ. պատմ. Եւսեբիոսի», էջ 1260:

4716. 1581 թ. Խլաթ. Մառնատիր, «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1289:

4717. 1592 թ. Գինեկաց գյուղ. Մառնատիր. «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1277:

4749. 1575 թ. Ապարանից վանք. Խլաթ, «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1277:

4756. ԺԶ դար. գրիչ՝ Մկրտիչ. «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1279:

4765. 1695 թ. Կ. Պոլիս. Ժողովածու, գրիչ՝ Կարապետ. «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1282:

4774. ԺԶ դար. Մառնատիր, գրիչ՝ Գրիգոր արեղա, «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1283:

4822. 1491 թ. Արծկե, Մառնատիր, գրիչ՝ Հակոբ, «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1294:

4879. ԺԷ դար. Մառնատիր, գրիչ՝ Դիլաք, «Եւսեբիոս Կեսարացի», էջ 1307:

Բ հատոր

5002. ԺԷ դ. գրիչ Սահակ սարկ. Եւսեբիոս մատենագրութիւնը, մեկնութիւն Ժ. խորանագրն, պատճառ մեկնութեան Աւետարանին, մեկնութիւն Աւետարանին հարցողաբար, էջ 14:

5295. 1375 թ. Կաֆա, գրիչ Մաղաքիա դպիր, «Հարցմունք Եւսեբի առ Անատոյ», էջ 75:

5318. 1465 թ. Վան, գրիչ Վարդան երեց, Նիկողայոս. Յայտնաւորք. Եւսեբիոս Կեսա-

րացույ «ի համբարձումն Քրիստոսի», էջ 50:

5443. ԺԳ դար. ժողովածու, գրիչ Վարդան, Ստեփանոս քահանա—բովանդակություն՝ ճառք, քարոզ, ինչպես նաև «Յեկեղեցական պատմությունն Եւսեբիոս Կեսարացու», էջ 108:

5455. 1696 թ. Էջմիածին, գրիչ Ղազար Յամթեցի, ժողովածու:

6017. ԺԷ դար. ժողովածու, գրիչ Աբրահամ, «Հարցումն Եւսեբի առ Անատոլ», էջ 233:

6228. ԺԹ դար. ժողովածու ներքողեանք, ճառք, «Յեկեղեցական պատմությունն Եւսեբիոս Կեսարացու», էջ 275:

6669. 1365 թ. գրիչ Մարտիրոս. «Հարցումն Եւսեբի առ Անատոլ», էջ 410:

7245. ԺԷ դար. ժողովածու, Ս. Գեորգ եկեղեցի, ճառք, խրատք, ներքողեանք, «Յեկեղեցական պատմությունն Եւսեբիոս Կեսարացու», էջ 491:

7441. 1332 թ. գրիչ՝ Վարդան, Աբրահամ քահանա. ճառք, ներքողեանք «ի պատմութեանց Սոկրատայ, Ագաթանգեղայ, Եւսեբիոս Կեսարացու», էջ 533:

7489. 1725—1729 թթ. Երուսաղեմ, Կ. Պոլիս, գրիչ Մարտիրոս երեց. ճառք, ներքողեանք. «Յեկեղեցական պատմությունն Եւսեբիոսի Կեսարացու», էջ 545:

7729. 1200—1202 թթ. ճառքնաիր, առաջվանք (Երզնկա), գրիչ Վարդան քահանա Կարմեցի. ճառք, ներքողեանք. «Յեկեղեցական պատմությունն գրոց Եւսեբիոսի, Սոկրատայ», էջ 598:

7853. 1366, Երզնկա, ժողովածու, գրիչ Մարկոս քահանա, Գրիգորիս քահանա, տաղ, զանգ, քարոզ, «Յեկեղեցական պատմությունն Եւսեբիոսի Կեսարացու», էջ 625:

8179. ԺԳ դար. գրիչ Գրիգոր, վարք և վկայաբանություն. «Յեկեղեցական պատմությունն Եւսեբիոսի Կեսարացու», էջ 689:

9017. 1685 թ. Կ. Պոլիս, ճառք, ներքողք (Եւսեբիոսի), էջ 854:

9185. ԺԳ դ. Եւսեբի առ Կարպիանոս թուղթն, էջ 885:

9382. ԺԶ դար. «Եւսեբիոսի Կեսարացու ի համբարձումն Քրիստոսի», էջ 919:

10236. 1700—1702 թթ. Վան. Գրիչ Մածակեր. ժողովածու. խրատք, ճառք (Եւսեբիոս Կեսարացի), էջ 1075:

ՈՐԻԳԵՆԵՍԻ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ, ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ

ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Բազմաթիվ և երկարապատում ճառեր պետք էին արդարև, ձեռնարկելու համար այս անձնավորության վարքը գրելու աշխատանքներին: Եվ անհրաժեշտ էր ըստ արժանվույն առանձին պատմություն շարադրել նրա մասին: Իսկ մենք որ միշտ կողմնակից ենք եղել ամեն ինչում համարուտ գրելու, քիչ բան պիտի պատմենք նրա մասին, քաղելով այդ բոլորը նամակներից, նրա բարեկամների և ծանոթների խոսքերից, վկայություններ՝ որոնք հասել են մեր ժամանակները: Փորձենք այստեղ ամենից ավելի ստույգ վկայությունները պատմել:

Որիգենեսի մասին եղած այդ վկայությունները ինձ արժանահավատ են թվում, նրա խանձարորից սկսած:

Սևերիոս կայսրի թագավորության 10-րդ տարին էր, երբ Ալեքսանդրիայի և համայն Եգիպտոսի եպիսկոպոս էր Դեմիտրիոսը և

երբ սաստկագույնս բորբոքվում էր հալածանքների հրդեհի բոցը և շատերը քրիստոնյաներից ընդունում էին մահատակության պատկեր:

Բորբոքվելով վառվում էր նաև Որիգենեսի ոգին դեռևս իր պատանի հասակից, ի սեր և ի խնդիր մահատակության: Նա ինքն իրեն գցում էր վտանգների մեջ, մեծ սիրով ու հանդուստք մրցում էր մահատակվողների հետ: Իսկ մահը շատ հեռու չէր նրանից: Բայց աստվածային Նախահամությունը հեռու էր պահում նրան այդ ստույգ վտանգներից, շատ քրիստոնյաների և մանավանդ իր մոր համար: Առաջինը մայրն էր որ թախանձագին խոսքերով խնդրում էր նրան, հանում իր մայրական սիրույն խնայել իրեն: Եվ երբ մայրը հասկացավ որ Որիգենեսը շատ է ցանկանում մահատակության, երբ մանավանդ նրա հորը բռնեցին և քանադակեցին, որդին հպարտանում էր հորը մարտիրոսության վկայության համար, այդ ժամանակ մայրը վերցրեց ու պահեց Որիգենեսի զգեստները և բռնությանը նրան արգելափակեց տանը:

Սակայն, Որիգենեսը հասկանում էր որ բացի իր մահատակվելու ցանկությունից ինքը ոչինչ չունի անելիք, և քանի որ չէր

* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում քաղվածաբար մի հատված աշխարհաբար թարգմանությանը Եվսեբիոս Կեսարացու «Պատմությունն Եկեղեցու» աշխատության «Դպրութիւն վեցերորդ»-ից, որը նվիրվել է Որիգենեսի մանկության, դատարարականության և առաջին քարոզչության տարիներին:

կարող լուել ու հանգիստ մնալ, այդ ժամանակ քաջալերանքի մի գիր ուղարկեց հորը, որ նա հաստատ մնա իր մարտիրոսական վկայության մեջ. «այինդ կաց, գրում էր նա հորը—և մեր մասին մտածելով միտքդ չփոխես»: Քաջալերանքի այս հորդորը մանկական ողջմտության և խորը բարեպաշտության արտահայտությունն էր, որովհետև Որիգենեսը մանկուց դաստիարակվել էր մեծ նվիրումով և հարատև ջանքերով հավատքի և Ա. Գրոց ուսման մեջ: Հայրը նրան արտաքին գիտության և հունական փիլիսոփայության մեջ դաստիարակելուց առաջ կրթել էր սրբության և առաքելության մեջ և հրահանգել էր ամեն օր Աստվածաշնչից անգիր անել հատվածներ և արտասանել: Եվ այս բոլորը ոչ թե մանկական կամքի հակառակ, այլ Որիգենեսի համաձայնությանը և հաճությանը... Որիգենեսը շատ էր ուրախ որ այսպիսի պատվական հայր ունի, որը շատ անգամներ գիշերները գալիս հրկում էր իր որդու վրա, մինչ նա ննջում էր, բացում էր նրա կուրծքը, համբուրում էր այն ջերմեղանքի սիրով որպես բնակարան Աստուծո Հոգու: Հայրը երջանիկ էր իր քաջամանուկ զավակով:

Երբ հորը նահատակեցին, Որիգենեսը որբ մնաց, իր մորը և վեց փոքր եղբայրների հետ, երբ ինքը 17 տարեկան էր: Հորը մահից հետո պետությունը ընտանիքի ստացվածքները հարքունիս գրավեց: Ընտանիքը խեղճ ու աղքատ մնաց: Բայց ընտանիքի անդամները արժանի եղան միաժամանակ, Աստծու խնամքին ու հովանավորությանը: Հորը նահատակությունից հետո, Որիգենեսը մեծ նվիրումով իր վրա վերցրեց ընտանիքի հոգը: Նա քերականության դասեր ավանդելով հայրապետում էր, ամենայն առատությամբ, ընտանիքի և իր նյութական կարիքները:

Որիգենեսը 18 տարեկան էր երբ ուսուցիչ նշանակվեց Առաքյալների համար, հավատքի ուսուցման մեջ... և մինչ Առաքյալների ստորնգնաներին բանտարկում էին և կամ մահվան դատապարտում, նա մեծ համարձակությամբ միանալով նրանց, իր անձը վտանգի էր ենթարկում, խիզախությամբ համբուրում էր նրանց, ողջունում և քաջալերում, երբ մոլեգնած հեթանոսների ամբոխը սպառնում էր նրան քարերով սպա-

նել: Իսկ Որիգենեսին Աստծու փրկարար Աջը օգնության էր հասնում: Եվ նա հրաշքով ազատվում էր իր թշնամիներից:

Հեթանոսների ամբոխը այնուհետև հարձակվում էր այն տան վրա, ուր նա ապրում էր և ուսուցանում՝ հավատքի սրբությունն ու աստվածապաշտությունը աշակերտանների մի մեծ բազմության: Կատաղած ամբոխը ամեն օր հալածում էր նրանց, իսկ հավատացյալները փախչում էին տնից տուն, այն աստիճան որ ողջ Ալեքսանդրիա քաղաքը չէր բավարարում նրանց պատսպարելու:

Որիգենեսը բազում տարիներ այսպիսի քարոզությամբ էր պարապում: Ամբողջ գիշերներ տքնում էր հրահանգներով, երկար ժամեր աստվածային գրքերի ընթերցումներով էր զբաղվում, խստակրոն կենցաղավարությամբ էր ապրում, ցերեկը պահեցողությամբ էր անցկացնում, իսկ գիշերվա քնի ժամերը չափավորում էր: Մահի վրա երբեք չէր քնում, այլ հապճեպ կերպով սեղանի հատակի վրա գետնախշտիկ էր լինում: Խիստ կերպով հետևում էր Փրկչի պատվիրաններին, չունենալ երկու պարեգոտ, կոշիկ չհագնել և շատ չհոգալ վաղվա մասին:

Փոքրուց սովորել էր տոկալ ցրտի և մերկության, խիստ ծովալություն: Հրաժարվում էր ստացվածքներից և իր այդ կենցաղավարությամբ հիացնում էր շատերին:

Պատմվում էր նրա մասին որ բազում տարիներ ոտնաբոքիկ էր լինում, ոչ կոշիկ և ոչ իլ հողաթափ էր հագնում: Հրաժարվում էր գինուց, բավարարվում էր միայն անհրաժեշտ ուտելիքներով: Բազում տարիներ տառապում էր ստամոքսի խանգարումներով:

Իր աշակերտներից և մույնիսկ հեթանոս իր ուսանողներից շատերը հետևում էին նրա կյանքի օրինակին և կենցաղավարությանը: Կրթված հեթանոսներ և փիլիսոփաներ հետևում էին նրա վարդապետության ուսմունքին: Նրանցից շատերը սիրով հավատացին և ընդունեցին Աստծու խոսքը: Նրանցից ոմանք մույնիսկ հալածանքների ժամանակ պայծառացան, ուրիշներ ձերբակալվելով իրենց կյանքը կնքեցին մարտիրոսական վկայությամբ⁴⁰:

⁴⁰ Եսեքիոս Կեսարացի, Պատմություն Եկեղեցու, մույնը, էջ 419—520:

